

ՄԻՐԱՀԱՐՆԵՐԻ ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ.

- Սիրահարների Ակցիան (այսուհետ՝ «Ակցիա») գործում է 2014թ. Փետրվարի 12-ից 16-ը՝ ԶԻԳԶԱԳԻ բոլոր վաճառասրահներում:
- Ակցիային կարող է մասնակցել յուրաքանչյուր անձ (այսուհետ՝ «Մասնակից»), ով պատրաստ է ԶԻԳԶԱԳԻ վաճառասրահում իր սիրո խոստովանությունը գրի առնել ցուցատախտակին, լուսանկարվել այդ գրառման հետ և համաձայնել, որ լուսանկարը տեղադրվի Զիգգագի Facebook-յան էջում (այսուհետ այդ գործողություններն ամբողջական՝ «Սիրո խոստովանություն»):
- Սիրո խոստովանությունը գրի առնելու պահին այդ խոստովանության հասցեատիրոջ ներկայությունը ԶԻԳԶԱԳԻ վաճառասրահում պարտադիր չէ:
- Սիրո խոստովանությունն արած **Մասնակիցը կստանա 10% զեղչ**՝ Ակցիայի ընթացքում մեկանգամյա գնում կատարելիս, գնված բոլոր ապրանքների համար, բացառությամբ «Թեժ գին», «Նոր գին» և այլ հատուկ առաջարկների տեսքով ներկայացված ապրանքների:
- Սիրո խոստովանությունն արած **Մասնակիցը կունենա հնարավորություն ստանալու երեք մրցանակներից մեկը**՝ մասնակցելով Սիրահարների մրցույթին:

Մրցույթի մասին՝

- Սիրո խոստովանությունն արած Մասնակիցների լուսանկարները կտեղադրվեն Զիգգագի Facebook-յան էջում և Facebook-ի Օգտատերերի քվեարկությամբ կորոշվեն ամենա յուրօրինակ Սիրո խոստովանությունն արած երեք Մասնակիցները:
- Քվեարկությամբ ամենաշատ ձայները ստացած Մասնակիցը կճանաչվի Մրցույթի Հաղթող և կստանա գլխավոր մրցանակը՝ **SONY սմարթֆոն**:



- Քվեարկության արդյունքում ձայների թվով երկրորդը ճանաչված Մասնակիցը կստանա մրցանակ՝ **EnergySystem պլանշետ**:



- Քվեարկության արդյունքում ձայների թվով երրորդը ճանաչված Մասնակիցը կստանա մրցանակ՝ **Bosch սրճեփ:**



- Մրցույթի սկիզբն է 2014թ. Փետրվարի 12-ը, ժամը 14:00-ն, ավարտը՝ 2014թ. Փետրվարի 23-ը, ժամը 22:00-ն:
- Մրցույթի արդյունքները և հաղթողների անունները կհրապարակվեն 2014թ. Փետրվարի 25-ին՝ Զիզգագի Facebook-յան էջում:
- Հաղթող Մասնակիցները կարող են ստանալ Մրցանակները Զիզգագ Մեգասթորում, հասցե՝ Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 3, Դալմա Գարդեն Մոլ, հեռ. 060 461010: Խնդրում ենք ունենալ անձը հաստատող փաստաթուղթ:
- Քվեարկության ենթակա չեն այն լուսանկարները, որոնք տեղադրվել են յուրօրինակ Միբո խոստովանության գրառումը ներկայացնելու նպատակով, սակայն այդ լուսանկարներում բացակայում են գրառում կատարողները:
- Քվեարկության կարգը.
Անհրաժեշտ է մտնել համապատասխան հղումով, լուսանկարներում գտնել Ձեր նախընտրած մասնակցին և սեղմել VOTE կոճակը: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ քվեարկությանը մասնակցում են միայն Vote-ի միջոցով ստացված ձայները և ՈԶ թե Like-երը:
- Մրցույթի շրջանակներում յուրաքանչյուր Օգտատեր մեկ մասնակցի օգտին կարող է քվեարկել միայն մեկ անգամ:
- Քվեարկությանն ընդունվում են միայն հայաստանյան օգտատերերի ձայները:
- Քվեարկության արդյունքներին արհեստականորեն ազդելու ցանկացած փորձ կկասեցվի: